

Եւ այսպէս զառօրեայ կեանս դառնատխուր
գիմօք եւ միշտ փորձութեամբ անցուցեալ՝ կայաք
յոյժ տառապանօք, զմոխիր իբր զհաց ուտելով եւ
զըմպելիս արտասուօք խառնելով: Սակայն Տեառն
փառք եւ Սուրբ Կարապետին իւրոյ շնորհ. զի թէ-
պէտ մեք այսպէս, այլ՝ զօրութիւն Աստուծոյ օգնէր
յամենայնի եւ սրբոյ Տանն իւրոյ աճէր օր ըստ օրէ
վայելչութեան պայծառութիւն:

Ս. Նշանը այս զրոյցի հետեւանքով կը կոչուի Աբդու-
թուս Իսկ էրդու-թուս կամ Եղրդուս մշտագալար ծառ մ'է դեռ կը
պահուի վանքին արեւելեան կողմը, ցածը՝ ածուին մէջ,
պարսպուած: — Ս. Յովհաննու շինութիւնը, աւանդու-
թեամբ Ս. Կարապետի հետ ժամանակակից է: Հետեւաբար
լուսաւորչէն: Ս. Յովհաննէան ալ իրարու կցուած երեք
տաճարներու (Ս. Կարապետ, Ս. Աբդու-թուս, Ս. Սրբի-
նոս) խումբ մըն է: Ամենէն հոյակապ տաճարն է Ս. Սաե-
փանոս. սակայն քնասուած երկրաշարժէն: Ս. Յովհաննէս ի
միջի այլոց Շէլ-է-ղոյ ալ կ'ըսուի, որովհետեւ հոն կայ լիւ
մը, որուն համար կը զրուցուի թէ Քրիստոսի վրայ թա-
փուած ագնիւ նարգոսի շին եղած ըլլայ: — Ս. Յովհաննու
գիբքն ալ թէեւ ոչ Ս. Կարապետինն պէս լայն եւ ընդար-
ձակ բայց հիանալի է եւ ընդարձակ հորիզոններ կ'ընդգրկէ.
կարծես արծուի բոյն մըն է մացառաղօղ:

Սարգիս Վարդապետը ոչ միայն շինարար մըն է
եղած, այլ եւ գեղարուեստի սիրահար մը, քարոզիչ մը.
նշանաւոր Տպագրիչ Մարգուանցի Գրիգոր դպիր անոր ա-
շակերտած է ծաղկաշինութեան արուեստին մէջ: Սարգիս
Վարդապետ 1684ին Պոլիս կու գայ Գրիգոր դպրին հետ, կը
քարոզէ երկար ատեն կը վերադառնայ Կոնստնուսի վանքը.
«Ես նուազ տմենեցունց Մարտըանցի Գրիգոր դպիրս, որ
եմ ձեռնասուն աշակերտ Տիգրանակերտցի Ծաղիկ Երաթիշ
Սարգիս Բիթլիսի վարդապետին, որ ի յԱմրոս Դասա-
տունն է վարժեալ, հմտաւ տառաւորի գրոց. Եւ ես
նուազ աշակերտ գոլով նմին ըստ իմում կարողութեամբս
(sic) ուսայ ի նմանէ զԵմբրեցու-թիւն եւ զԹաղարար-թիւն:
Եւ զկնի ժամանակաց եկեալ ի Կոստանդնուպոլիս հանդերձ
վարդապետիւս, որ էր թուական Հայոց ՌՃԼԳ (= 1684):
Եւ ինքն յետ Բաղդադ Կոնստնուսի եւ գնաց ի Վանքն իւր
Սրբոյն Կոնստնուսի, (Յայտաւարք):